



Երասխ եւ Կուր: — ահա Հայաստանը, միայն բուռն կոիւններով դրաւելի, որ սահայն իր տէրերուն կը մատուցանէր յարձակողական լաւագոյն հնարաւորութիւնը թէ՛ դէպի հոռմէական եւ թէ՛ դէպի պարթեւական նահանգները: Այս երկիրը Պարթեւեան ռու ձեռքը անհանդուրժելի սպառնալիք մըն էր հոռմէական ասիական ծայրագաւառներուն: Իսկ Հոռմայ ձեռքը՝ տեւական վտանգ մը կը կազմէր պարթեւական պետութեան, միջին Եփրատի եւ մարական բարձրավանդակին վրայ գտնուող, լաւագոյն երկիրներուն համար: Ուստի Հայաստանի համար կոիւր հոռմէական-պարթեւական յարաբերութիւններու կնիքը մնացած է իրենց դրացիութեան ամբողջ տեւողութեան:

Հոռմ, ինչպէս Հէնտըրսըն, Մոմսէնի ակնարկութիւններն ընդլայնելով շատ գեղեցիկ կը մեկնէ, արեւելեան քաղաքականութեան այս հիմնական խնդիրը լուծելու համար չորս տարբեր ուղիներ կրնար ընթանալ: Կրնար այդ կարեւոր երկիրն իր պարթեւ դրացուն ձգել, բայց այդ պարագային, ինչպէս տեսնուեցաւ Վեսպասիանոսի ժամանակ, հարկ էր արեւելեան բանակը մեծ չափով ուժեղացնել: Կարելի էր, ինչպէս յետոյ Տրայանոս փորձեց, Հայաստանը հոռմէական նահանգի վերածել: սահայն այդ ընդարձակ եւ ըմբոստ երկիրը միայն հզոր բանակով հնարաւոր էր բռնել, եւ այդ այն դէպքին միայն, երբ Միջագետքի արեւմտեան մեծագոյն մասը հոռմէական դառնար: Ուրեմն՝ եթէ կ'ուզուէր, աւզոստոսեան քաղաքականութեան հետեւելով, Եփրատի սահմաններուն վրայ փոքրաթիւ բանակով մը գոհանալ, կը մնար միայն երկու ընթանալի ճամբայ, զորոնք Հէնտըրսըն հոռմէական իրական եւ անուանական աւատատիրութեան քաղաքականութիւն կ'անուանէ: Կայսրութեան հիմնադիրը առաջին ուղին բռնեց, իր թուր՝ Ներոն, սոյն ուղութեան ուրիշ մէկ փոփոխակը, զոր Հէնտըրսըն անիրաւարար կը նոյնացնէ երկրորդին հետ:

Աւզոստոսեան քաղաքականութիւնը՝ հակառակ իր հիմնադրին կամքին, իր մէջ պարթեւական պետութեան դէմ մշտապէս հակառակութիւն կը քողածածկեր եւ ի վիճակի չէր հոռմէական արեւելքի համար հոռմգարտ պարգացում մը սպասուելու: Հոռմէական Հայաստան մը կամ Հայաստան մը, ուր Հոռմ պարթեւական պետութեան հակառակ

իրեն հարստակ հարստութիւնը կը պահէր, բաց վէրք մըն էր պարթեւ պետութեան մարմնոյն վրայ: Արշակունիները չէին կրնար, հոռմէական ազդեցութեան շրջանակին մէջ թողուլ այդ կարեւոր երկիրը, որ ինքեան թէեւ դժուարաւ յարձակելի էր, սակայն այնչափ մօտ էր իրենց արեւմտեան եւ արեւելեան նահանգներու հաղորդակցութեան ներքին զգայուն գծերուն: Անոր համար ալ Հահատ Դ. եւ անոր յաջորդները Հրահատաքէս, Արտաւան, Վարդան, մինչեւ Վաղարշակ գրեթէ անընդհատ փորձեցին վանել Հայաստանէն հոռմէական ազդեցութիւնը: Իրենց այս նպատակին ապահով նեցուկ էր միշտ, մանաւանդ հայկական արեւելքի ուժեղ իրանացուցումը եւ Հոռմի կառավարութիւնը ստիպուած էր կրկին ու կրկին քաղաքական եւ սոցիալական ծանր ճիգեր թափել Հայաստանը պահել կարենալու համար:

Աւզոստոս Բ. յ. 20ին անձամբ արեւելք կը գտնուէր եւ իր խորզ գաւակին՝ Տիրերիոսի միջոցով պարթեւական դաշնագիր մը կը կնքէր, որ Կրասոսի պարտութեամբ գերուած զինանշանները ետ կը դարձնէր եւ հոռմէական զէնքերու պատիւը կը վերականգնէր, Հայաստանը վերստին ամբողջս Հոռմի ձեռքը կը յանձնէր եւ կարծես թէ երկու մեծ պետութիւններու բարեկամական յարաբերութեան սկիզբ կը դնէր: Սակայն արդէն Բ. յ. 1ին այլեւս կայսրը հարկադրուած էր իր թուր՝ Կ. Կեսարը, վերստին Հայաստան ուղարկել կարգադրելու համար դահակալութեան խառնակութիւնները, որոնք կը սպառնային պարթեւական ազդեցութիւնը գերելիս դարձնելու: Յաջորդ ընդհատուած Հայաստանի խնդիրներուն միջամտութեան քաղաքականութիւնը, առժամայէս հարկ չտեսնուեցաւ շարունակել, մանաւանդ որ Հոռմոսի եւ Դանուբի սահմաններու վրայ քաղաքական դժուարութիւններ կը տիրէին եւ պարթեւ պետութիւնն ամբողջական քայքայման մէջ էր:

Սակայն երբ 15ին Արտաւան մեծ արքան Հայաստանն ալ գրաւեց եւ Եփրատի սահմաններուն կը սպառնար, այլևս ուժեղ միջամտութիւն մը անյետաձգելի դարձաւ: Տիրերիոս կայսեր որդեգիրը եւ գահակիցը՝ Գերմանիկոս 18ին արեւելք գնաց եւ յաջողեցաւ հան նոր հարստութեան հետ աւզոստեան դաշնագրին իմաստով համաձայնու-

թիւն մը կնքել որով թագաւորն Եփրատի սահմանագծին կը համաձայնէր, Հայաստանը Հոռմի կը թողուր, եւ հոն պաշտպանեալ նոր թագաւոր մը կը դրուէր: Սահայն երբ վերջինս 33ի ժամանակներն մեռաւ, Արտաւան իւր երէց որդին Հայաստանի գահը բարձրացուց, որու հետեւութեամբ Ծերունի Տիրերիոսը, արեւելեան քաղաքականութեան մէջ իր առաջին յաջողութեան յիստուն տարիէ աւելի ետքը՝ անգամ եւս ստիպուեցաւ Հայաստանի տիրապետութեան համար ծանր կռիւ մղելու: Միհրդատ վրացի իշխանը 36ին՝ բուռն հակամարտութիւններու առարկայ դարձած այս երկիրն Հոռմի պաշտպանեալ թագաւորն եղաւ եւ Կալիգուլայի անիմաստ քաղաքականութեան ծնած պարթեւական միջնախաղէ մը յետոյ, 43ին անդին կրցաւ հոռմէական ուժերու օգնութեամբ իր դերըն պահել:

Բայց վերջապէս 51ին աղէտքը կատարեալ եղաւ, երբ մէկ կողմանէ կարող Վաղարշակի գահ բարձրանալով պարթեւական պետութեան մէջ անդորրութիւնը տիրեց, միւս կողմանէ Ռատամիտ վրացի իշխանն իր հօրեղբոր Միհրդատի դէմ պայտախանն իր հօրեղբոր Միհրդատի դէմ պայտախանն յեղափոխութիւն մը յարուց, եւ տական յեղափոխութիւն մը յարուց, եւ ստոնց համընթացան Կղազիոսի արտաքին քաղաքականութեան գուտ բրիտանական ուղութիւնը եւ Ասորիքի տեղակալին հեղեհանդատատիրութիւնը: Կղազիոսի մահուան հանդատատիրութիւնը: Կղազիոսի մահուան հանդատատիրութիւնը արեւելեան քաղաքականութիւնը կատարեալ կազմալուծման մէջ էր: Հայաստանը, առաջակողմեան Ասիայի այս միջնաբերդը, որու տիրապետութեան վրայ հիմնաւորած էր Աւզոստոս արեւելեան սահմաններու պաշտպանութեան կազմը, կորուսած էր եւ Պարթեւներու արքային եղբայրը, երիտասարդ եւ ընդունակ Տրգատը, այդ կարեւոր երկիրն բացարձակ տէրն էր դարձած: Այս պարագաներու մէջ հոռմէական տէրութեան համար հրամայողական անհրաժեշտութիւն էր արեւելեան յարաբերութիւններով զբաղիլ:


Ներոնի խորհրդատուներն ըմբռնած էին, թէ Աւզոստոսի ընտրած ուղին խաղաղութեան ուղին չէր, եւ միայն մեծ զոհերով կ'ուսանգներով կը հնարաւորէր խնդրական երկիրն տեւական պահպանումը: Անոնք ճանչցած էին թէ պարթեւական պետութեան դէմ հակամարտութիւնը յարմար հիմք մը չէր հոռմէական արեւելեան քաղաքա-

կանութեան, քանի որ Հայաստան իր քաղաքակրթութեամբ անկէ կախում ունէր: Եւ այդ խորհրդատուները մեծ քաջութիւնն ունեցան՝ հետեւելով իրենց լաւագոյն տեսութեան, շեղելու Աւզոստոսէ գնահատուած ուղիէն:

Ներոնի խորհրդականները նախապատիւ համարեցան ստեղծել հայ պետութիւն մը, որ թէ՛ Հոռմի հարստակ պիտի մնար եւ թէ՛ պարթեւական երկրորդական պետութիւն մը պիտի մնար: Հէնտըրսըն այս լուծումը անուանական հոռմէական գերիշխանութիւն կը կոչէ, որ թէեւ կերպապէս ուղիղ է, սահայն այդ բացատրութիւնը նորութեան էութիւնը լիովին չի պարզեր: Հայաստանի վրայ ազդեցութեան բաժանումը, որ տեսակ մը համիշխանութիւն պիտի կազմէր երկու մեծ պետութիւններու միջեւ, եւ ուր պարթեւ արքայի մը իրականին իր ձեռքն պիտի ունենար ամէն իշխանութիւն, նորաստեղծ կացութեան միայն մի երեսը կը պատկերացնէր: Այս խնդրոյս մէջ կարեւորագոյնն էր Պարթեւաց մեծ արքային հետ հոռմէական յարաբերութիւններու նոր ձեւաւորումը: Կասկածոտ թշնամութեան փոխարէն, որ ցարդ արդելք հանդիսացած էր հայկական խնդրոյն լուծումին, պիտի անցնէր քաղաքական սերտ համերաշխութիւն մը, որու համար Կորբուլոն 63ի բանակցութիւններու մէջ՝ Ընկերակցութիւնն ասացուածը կիրարկած է: Հայ գահուն իշխող արշակունին պէտք չէ որ այլ եւս իր տան շահերուն եւ աւատաւորի իր երգման միջեւ երկընտրանքի դժուարին կացութեան մէջ գտնուէր: Հոռմէական արեւելեան սահմանները պիտի ապահովէր այսուհետեւ պարթեւ պետութեան հետ բարեւոք յարաբերութիւնը, որ պիտի հիմնուէր Հայաստանի մէջ արդար իրաւունքներու երկակողմանի ճանաչումին վրայ: Ներոնեան կառավարութիւնն այս մեծ նպատակը տաստարուան ծանր կռիւներու մէջ անսասան աչքի առջեւ ունեցած է:

Ներոնեան կառավարութիւնն արեւելեան քաղաքականութեան մարզին մէջ աւանդական դժէն հեռանալով, ի սկզբան միայն պաշտպանողական դիտումներով կ'առաջնորդուէր, սակայն յետոյ հետզհետէ

1 Տակիտ. ԺԵ, 27:  
2 Ներոնի պարթեւական քաղաքականութեան միտանականութիւնը՝ իր հետախոյզներէն ո՛չ մին ճիշդ բերած է:



աշխարհակալութեան ընդարձակ ծրագիր մը ընդգրկեց, որու միակ ձգտումն էր պարթեական ամբողջ պետութիւնը Հոռոմի ազդեցութեան ենթարկել: Մեծապէս ուշադրաւ է, որ այս հեղինական ուղութեամբ արտաքին քաղաքականութիւնը կը համընթանայ պետութեան ներսը՝ ազգային-հոռոմէական գլխաւորութեան դադափարէն հեռանալուն եւ կեանքի դիտումին համաձայն հեղինական համաշխարհային միապետութեան մը կանգնումի ձգտումներուն: Բայց արեւմուտքի յետաշրջումը բացարձակապետութեան հետ ոչնչացուց արեւելեան այս մեծ յատակադիմները. եւ սակայն վերջին կղաղեանի ճիշդ այս արեւելեան ծառայուն քաղաքականութիւնը մասնաւոր ուշադրութեան արժանի է: Այս աշխատութեան նպատակն է այդ քաղաքականութեան ծագումն, ընթացքը եւ ձգտումները քննութեան առնուլ:

Մոմսէնի<sup>3</sup> կը պարտինք այն տեսութիւնը, թէ Ներոնի պարթեական քաղաքականութեան մէջ դիտումնաւոր եւ իր պատճառներու մէջ արդարացի չեղում մը կայ Աւգոստոսի աւանդութենէն: Իրմէ վերջը ամէնէն աւելի Բ. Վ. Հէնտըրըն<sup>4</sup> այս տեսութիւնը յառաջացուցած եւ հիմնաւորած է. սակայն անոր ուշադրութենէն վրիպած է կայսերական քաղաքականութեան յամառ հետեւողականութիւնը եւ նպատակին անչեղ ձգտումը տասնամեայ կռիւներու յարափոխութիւններու մէջ: Մեր ջանքը պիտի ըլլայ ըստ պատշաճի դարգացնել այդ տեսութիւնը, հիմնակէտ անոնով Կորբուդոնի պատերազմական տեղեկագիրը, զոր կը գտնենք երկու իրագրեկներու՝ Տակիտոսի եւ Դիոնի քով: Պիտի փորձենք յաջորդ էջերով աշխարհագրական եւ արեւելագիտական հետազոտութիւններու տուեալներու քննութեամբ՝ ներոնեան արեւելեան քաղաքականութեան ասիական շրջագիծը ըստ կարելու լուսարանել: Պարթեական ծանօթ պատերազմը լաւագոյն մեկնակէտը պիտի կազմէ:

(Շարունակելի): Թրգ. Վ. Մ. ՀԱՊՈՋԵԱՆ



<sup>3</sup> Հ. Պ. Ե. 384 եւ յլ. :  
<sup>4</sup> Ներոն, 149 յլ. :

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ**  
**ՍՏԱՍՊՈԼՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**  
**ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ԲԵՕՍԻԻՐՃԵԱՆ**

Գ Լ Ո Ւ Խ Զ .

(Շարունակելի):

Ս. Երրորդութիւն եկեղեցիին փողոցին բերանն էր, որ 1860 ին «Մատուի Թատրոն» կոչուած շէնքին մէջ սկսաւ հայկական Թատրոնը իր գեղեցիկ ներկայացումներով, որ ատեն մեծանուն Միքայէլ Նալբանդեանը՝ հեղինակը «Ազատ Աստուածն այնօրից» երգին, Պոլսէ գտնուելով կ'արտասանէր հոն «Հայ Թատրոն Պոլսի մէջ»<sup>1</sup> անուն այն հիանալի ձառը, որուն պարունակած սքանչելի գաղափարները դեռ այսօր կրնան դաստիարակիչ ըլլալ եւ առաջնորդ: 1870 ին Պերաի աղէտալի Տրդեհին, եկեղեցիին շատ մը կալուածներու շարքին այրեցաւ Նաուսի Թատրոնն ալ, եւ այն օրէն մեծ հարուած մը կրեց հայ Թատրոնը: Եւ երբ 1871 ին Ազգայնորոնական վարչութիւնը որոշեց՝ որ Ս. Երրորդութեան կալուածները վերաշինուին եւ ընտրեց Պերաի համար կալուածոց հոգաբարձութիւն մը, այս վերջինը գեղեցիկ մտածումը ունեցաւ կալուածներու վերաշինութեանը հետ կառուցանել նաեւ Թատրոն մը:

Եւ արդարեւ Պերաի պողոտային վրայ կանգնեց 1885 ին երրորդական ճաշակով շատ գեղեցիկ Թատրոն մը, ուր տեղի կ'ունենային ոչ միայն հայերէն, այլ եւ՝ օտար լեզուներով ներկայացումներ մեծապէս հասութեամբ եկեղեցիին Գժբախտաբար 1892 ին հրոյ ձարակ եղաւ այս Թատրոնը, որուն տեղ՝ հոգաբարձութիւնը տարի մը վերջ աւելի օգտակար համարեց շինել ընդարձակ հիւրանոց մը, որ է՝ Թոքաթլեան մեծահամբաւ պանդոկը:

Այս պանդոկին մէջ հիւրընկալուեցաւ 1909 ին Նորընտիր Կաթողիկոս Մատթէոս Բ. Իզմիրեան, զնրքը Էջմիածին տանելու համար Պոլսի եկած եկեղեցական հրաւիրակներուն հետ: Հոս 1918 ին բնակեցաւ, Հայաստանի նորածին հանրապետութեան պատուիրակութիւնը, զոր թուրք կառավարութիւնը բանակցութեան հրաւիրած էր, վերածին Հայաստանի

<sup>1</sup> Մեղու, Կ. Պոլսոյ, Թիւ 117, 30 նոյմ. 1860, Երեւանի Թ. տարի, Թիւ 461, 8 գեկտ. 1860:

սահմանները ճշգրտու: Այս պատուիրակութիւնը 1918 յունիս 19 ի չորեքշաբթի օրը Կ. Պոլսի Ժամանելով՝ ճիշդ 5 ամիս մնաց եւ ապարդիւն մեկնեցաւ 1 նոյեմբեր 1918 ին, համբերական պատերազմի զենագործարէն քիչ վերջը:

Բացի Թոքաթլեան պանդոկէն՝ Պերաի Ս. Երրորդութիւն եկեղեցին իր շուրջը ունի շատ կալուածներ, որոնց հասցիներուն կը հսկէ «Կալուածոց Հոգաբարձութիւն» անունով յատուկ մարմին մը ընտրուած Ազգ. կենդրոնական վարչութիւնէն:

Այս եկեղեցիին մէջ հաստատուած է 1846 ին Մարտիկեան ընկերութիւն մը, որուն գլխաւոր նպատակն էր համանուն վարժարանին օգնել նիւթագէտ, բայց երկար չէ տեւած:

Հոն 1823 ին Գէորգեան Նազարէթ մանկավարժը ընդօրինակած է «Սերսէս Լամբրոնացիի երկասիրութիւնը» գործը որ կը պահուի Վիեննայի Միսիթարեանց ձեռագրատունը ինչպէս գրած եմ այս աշխատութեանս Ա. Հատորին 215<sup>րդ</sup> էջին վրայ:

Հոն 1844 հոկտեմբերին Գպիր Անտոն վարժապետ Տիօնեան քեօթեանց ընդօրինակած է՝ Տիփսիսեցի Ստեփան Բժիշկ Շահրիմանեանի շարագրած «Անդեղայ Ժանտախտի» գործը զոր ծանօթացուցած եմ 1925 ին<sup>1</sup> եւ որ կը մնայ Ս. Ղազարի Միսիթարեանց քով:

3. Ս. Երրորդութիւն եկեղեցիէն դէպի հարաւ — արեւմուտք, անգրեկական Գեսպանատունին ետեւը Այնալը 2էլմէ կոչուած Թաղին մէջ կայ, բողոքական Հայերու փառաւոր գեղեցկաչէն Ս. Երրորդութիւն Ժողովարանը: Անոր կառուցման հիմնարկութիւնը տեղի ունեցած է 1905 ին եւ աւարտուած 1907 ին, ինչպէս կ'աւանդէ եկեղեցիին ձակաօր փորագրուած երկաթադիր արձանագրութիւնը, որ է՝

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻ  
ՀԱՅ ԱՆԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑՑ  
1905 ԴԵԿՏԻ 1907 ՀՈԿՏԻ

Հայկականի մօտ ձարտարապետութեամբ շինուած եկեղեցի մ'է այս, որուն անխտիր սատարած է ամէն հայ:

Անոր օրհնութեան եւ բացման հանդէսը կատարուած է 1907 ի վերջերը, եւ բացի ա-

<sup>1</sup> Բողոքաբեկ, 1925, էջ 38:

մերիկեան պաշտօնական ներկա,ացուցիչներէ, հանդիսական եղած են նաեւ ազգային պաշտօնական մարմինները:

Բողոքական Հայերու Ս. Երրորդութիւնը ունեցած է եւ ունի պերճախօս քարոզիչներ. որոնց մէջ նշանաւոր էին մանաւանդ՝ ներհուն Պրոֆ. Յակոբոս ճէճիգեանը, եւ պատուելի Աբսէն Շամունեանը. ասոնց հիանալի քարոզներուն հայ Ժողովուրդը ամէն կիրակի հոծ բազմութեամբ կ'երթար ունկնդրել:

Այս եկեղեցին իւր ներքեւը ունի ընդարձակ յարկ մը, որ պիտի ծառայէր դպրոցի:

4. Բողոքական Հայերու Ս. Երրորդութիւն եկեղեցիէն յետոյ դէպի վեր երթալով կը գտնենք Թաուլա պաշի պողոտային վրայ՝ 2էօրլիք 2էլմէ կոչուած փողոցին մէջ՝ Անարատ Յղութեան Բերց վարժարանը, որ հիմնարկուած է 1843 յունիս 17 ին. բայց 1870 ի Պերաի մեծ հրդեհին այրելով, վերաշինուած է աւելի փառաւոր, ընդարձակ եւ քարուկիր, որուն մուտքի դրան վերեւ փորագրուած է հետեւեալ երկաթադիր

ՄԱՅՐ ՎԱՆԱՏՈՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅ ԿՈՒՍԱՆԱՑ  
ԿԱՐԳԻ ԱՆԱՐԱՏ ԵՂՈՒԹԵԱՆ

երկաղ Արձանագրութիւնը: Այս վանատունը որ 80 եւ աւելի տարիներու պատկառելի տեւողութիւն մը ունի, դաստիարակած է բազմաթիւ հայ որբուհիներ, եւ կը դաստիարակէ դեռ, անձուէր մայրապետներու ընտիր խումբի մը միջոցաւ:

1922 ին այս վանատունին քոյրերը իրենց աշակերտուհիներուն հետ փոխադրուեցան Հոռոմ, յետոյ Տրիես, ուր են տակաւին. բայց իրենցմէ մաս մը, վերագարձաւ Կ. Պոլսի, ու վերստին բացաւ վարժարանը:

Վանատունս ունի իր մէջ գեղեցիկ եւ բաւական ընդարձակ մատուռ մը:

5. Անարատ Յղութեան Բերց շէնքէն դէպ հիւսիս առաջ ընթանալով, դարձեալ Թաուլա պաշի պողոտային վրայ աջակողմեան փողոցի մը մէջ կը տեսնանք Համազգեսց ընկերութեան երբեմնի վարժարանը, որ ունի դրանը վրայ 3 տող երկաթադիր փորագրուած արձանագրութիւն մը սապէս,